ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Վիոլետտա Սերգեյի Մանուկյանի «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Վ.Ս. Մանուկյանի «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները» ատենախոսությունը նվիրված է ժամանակակից քաղաքագիտության խրթին և առանցքային խնդիրներից մեկին՝ չճանաչված պետությունների կայացման գնահատմանը:

Մինչև վերջին տարիները համարվում էր, որ քանի դեռ պետությունը միջազգային ճանաչում չունի /ՄԱԿ-ի անդամ չէ/, միջազգային կազմակերպությունները և առանձին պետություններ պետք է խուսափեն շփումներից և այդ պետությունները հայտնվում էին միջազգային մեկուսացման մեջ: Իհարկե, եթե նոր պետության ստեղծումն իրականացվել է բռնությունների, ագրեսիայի և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործությունների միջոցով, նման մոտեցումը միանգամայն արդարացված է: Սակայն, եթե դա իրականացվել է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ ինքնորոշման իրավունքի կիրառմամբ /օրինակ, Կոսովոյի և Լեռնայի Ղարաբաղի դեպքերը/, ապա մեկուսացումն անթույլատրելի է, քանի որ այդ ժողովուրդները, հաճախ ենթարկվելով բռնությունների և ագրեսիայի, տառապանքներ կրելով պատերազմներից ու տնտեսական, սոցիալական բարդ իրավիճակների հետևանքով, կրում են նոր տառապանքներ՝ խաղաղ պայմաններում բարդ խնդիրների լուծման ժամանակ աջակցություն չստանալով , իսկ որոշ դեպքերում,

դառնալով փախստականներ, բարդ իրավիճակներ են ստեղծում այլ վայրերում: Հետևաբար, հարկ է ակտիվորեն աշխատել այդ պետություններում, աջակցել ժողովրդավարական գործընթացների զարգացմանը, իրավիճակի բարելավմանը: Առավել ևս, որ տնտեսական ու սոցիալական դժվարությունները հաղթահարող, որակյալ կրթություն ստացող և որակյալ կառավարում ապահովող ժողովուրդները շատ ավելի են պատրաստ տևական խաղաղության հաստատմանն ու հակամարտությունների արդարացի և օրինական լուծմաը: Հետևաբար, կարևոր են այդ պետությունների ուսումնասիրությունները և դրանց համար կիրառվող մոդելներում նման պետությունների առանձնահատկությունները հաշվի առնող նոր մոտեցումների մշակումը:

Վերոհիշյալ երեք առանձնահատկությունները Վ. Մանուկյանի աշխատանքը դարձնում են խիստ կարևոր, առանձնահատուկ ու արդիական: Ներկայացված հետազոտության արդիականությունը էլ ավելի է արժևորվում հատկապես սեպտեմբերի 27-ից թուրքաադրբեջանաահաբեկչական եռամիասնության կողմից սանձազերծած պատերազմի ֆոնին:

Հեղինակին հաջողվել է ծավալուն գրականության ուսումնասիրության հիման վրա վեր հանել գնահատման առավել օբյեկտիվ ու արդյունավետ չափորոշիչներն և մշակել գնահատման սեփական ինտեգրալ մոդելը, ինչով պայմանավորված է ատենախոսության գիտական նորույթն ու նաև կիրառական նշանակությունը: Մշակված մոդելը կարող է կիրառվել թե՛ գիտահետազոտական, թե՛ պետական կառավարման համակարգում՝ ավելի կանխատեսելի ու համակարգված դարձնելով պետության ինստիտուցիոնալ և անվտանգային կառավարման համակարգերը:

Միաժամանակ, պետության կայացածության գնահատման գիտական գործիքների լրամշակման և կատարելագործման խնդիրն արդիական է ոչ միայն գլոբալ համատեքստում, այլև հատկապես հայ ժողովրդի և հայկական երկու հանրապետությունների համար: Պետության կայացածությունը հարևանների ոտնձգությունները կանխող կարևոր գործոն է, մինչդեռ դյուրաբեկությունը

մեծացնում է գայթակղությունն՝ իրենք ձգտումներին ռազմական ճանապարհով հասնելու համար: Այսպիսով, սույն աշխատանքի շրջանակներում Արցախի Հանրապետության կայացածության գնահատումը, ինչպես նաև համեմատությունը հետխորհրդային տարածքի մնացյալ չճանաչված պետությունների հետ, առանցքային նշանակություն ունի, ինչպես նաև կարող է դառնալ հակամարտության կարգավորման իրական գործոն՝ միջազգային հանրությանը ներկայացնելով ԱՀ կայացածության մակարդակը որպես անկախ և ինքնիշխան պետության արդյունավետ գործունեության հավաստիք:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, վերլուծված է նրա տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության մեթոդները, շարադրված են նպատակներն ու խնդիրները, փաստարկված է աշխատանքի գիտական նորույթը, կարևորված է տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ **«Պետության կայացածության հատկանիշները և գնահատման մեթոդները»** հանգամանալից ուսումնասիրված են պետության կայացման մոտեցումները և սահմանումները: Նմանօրինակ մոտեցման շնորհիվ՝ հեղինակը բացահայտել է «պետության կայացում» հասկացության սահմանման հիմնական մարտահրավերները և տարբերությունները: Հատկանշական է, որ հեղինակը մոտեցումների բազմազանությունը բաժանել է հինգ հիմնական խմբի՝ օգտագործելով կոդավորման մեթոդը: Նմանատիպ համընդգրկուն ուսումնասիրությունը և քաղաքագիտական գործիքակազմի հմուտ օգտագործումն արժանի են բարձր գնահատականի: Դիտարկված է նաև պետության կայացածության գնահատման մոդելների դասակարգումը՝ բաժանված առանձին ոլորտների գնահատման մոդելների և ինտեգրալ մոդելների: Հեղինակը ներկայացրել է յուրաքանչյուրի մի շարք օրինակներ, և գործնականում ցույց տվել դրանցից ամեն մեկի առավելությունները, ինչպես նաև առկա թերությունները:

Կարևոր է հեղինակի վերլուծությունը և առաջարկությունները վերոնշյալ գնահատման մեթոդների օգտագործման հեռանկարների վերաբերյալ:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ **«Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ»**, հեղինակը դիտարկում է այնպիսի խրթին, սակայն տվյալ աշխատանքի շրջանակներում առանցքային խնդիր, ինչպիսին է պետության կայացածության և պետությունների միջազգային ճանաչման գործընթացների և վերջիններիս կապը կամ դրա բացակայությունն է: Հեղինակը ներկայացնում է վերլուծությունը ճիշտ փուլային տրամաբանությամբ: Սկզբում ուսումնասիրվել է ժամանակակից միջազգային իրավունքում ազգերի ինքնորոշման իրավունքի ընդգրկումը և կարգավիճակը, դիտարկվել են ՄԱԿ հիմնարար փաստաթղթերը և ԵԱՀԿ Հելսինկյան ակտը: Ներկայացվել է նաև միջազգային իրավունքում այս նորմի՝ jus cogens և erga omnes իրավական կարգավիճակը՝ դիտարկելով Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայում ամրագրված դրույթները և ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի որոշումները: Այնուհետև ուսումնասիրության են ենթարկվել պետության ճանաչման գործընթացը՝ ներկայացված երկսյուն համակարգի միջոցով, որի հիմնասյուներն են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները և jus cogens նորմերի, ինչպիսին որ ազգերի ինքնորոշման իրավունքն է, անխախտելիությունը: Խորքային վերլուծության են ենթարկվել Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշները, և ուշագրավ է հեղինակի փաստարկումն առ այն, որ Մոնտեվիդեոյի կոնվենցիան նախանշում է այն ուղին, որը պետության հռչակումից տանում է դեպի ճանաչում: Դիտարկվում է նաև Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշներն Արցախի և Կոսովոյի դեպքերի համար՝ եզրահանգելով, որ երկու պետությունները բավարարում են կոնվենցիայում ամրագրված հատկանիշներին:

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Պետության կառուցման առանձնահատկությունները հետկոնֆլիկտային միջավայրում»**, հեղինակն իրականացրել է հետկոնֆլիկտային փուլում ծագած մարտահրավերների ու պետության կառուցումը պայմանավորող գործոնների և դրանց վրա ազդող առանձնահատկությունների համապարփակ ուսումնասիրություն: Ուսումնասիրվել են պետության կառուցման գործընթացի վրա պատմական և կառուցվածքային ժառանգության ազդեցությունը, արդի գլոբալ միջավայրում պետության կառուցման պայմաններն ու մարտահրավերներն, ինչպես նաև պետության կառուցման գործընթացը պայմանավորող հիմնական գործոնները: Հետաքրքրական է հեղինակի մոտեցումն ուսումնասիրել պետության կառուցման գործընթացը պայմանավորող գործոնները դիտարկելով յուրաքանչյուրի դեպքում առանցքային դերակատարների ազդեցությունը և կենտրոն-ծայրամասեր հարաբերությունները: Հարկանշական է նաև, որ հեղինակը ներկայացրել է նաև հետկոնֆլիկտային պետության կառուցման գործընթացի առանձնահատկությունների և մարտահրավերների բազմաթիվ գործնական դեպքեր (Կոսովո, Հարավային Սուդանը, Սուդան, ԿԴՀ, Աֆղանստանը, Բոսնիա և Հերցեգովինա, Իրաք, Պակիստան):

Ատենախոսության չորրորդ գլխում՝ **«Չճանաչված պետությունների կայացման առանձնահատկությունները և հեռանկարները. հետխորհրդային տարածքի քառյակը»**, ըստ էության, ամբողջությամբ ներկայացված է գիտական նորույթ: Հեղինակն առաջարկել է «պետության կայացում» հասկացության համընդհանուր սահմանում, որի հիման վրա մշակվել է պետության կայացածության շուրջ համընդգրկուն մոտեցում: Քննարկվել են չճանաչված պետությունների կայացման մարտահրավերները և գնահատման հնարավորությունները: Քննարկված խնդիրների լուծման նպատակով հեղինակը մշակել է պետության կայացածության գնահատման ինտեգրալ մոդել, որը կիրառելի է ճանաչված և չճանաչված պետությունների կայացածության մակարդակների գնահատման

համար: Հեղինակը կատարել է հսկայական մեթոդաբանական աշխատանք. մանրամասն ներկայացված է գնահատման մեթոդաբանությունը, որը միտված է առավել արդյունավետ և օբյեկտիվ գնահատման ապահովմանը: Հատկանշական է, որ հաշվի են առնվել արդեն գոյություն ունեցող ցուցիչներում առկա թերությունները, ինչպես նաև ընտրվել են միաժամանակ ճանաչված և չճանաչված պետությունների գնահատման համար անհրաժեշտ և կիրառելի ենթացուցչներ: Մշակված մոդելի օգնությամբ իրականացվել է հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացածության ճշգրիտ գնահատում, հեղինակը մատնանշել է յուրաքանչյուր պետությունում առանցքային, կենտրոնական խնդիրը: Հեղինակն առաջարկել է տվյալ պետություններում կայացության մակարդակի խթանման համար հնարավորություններ՝ առաջնահերթ կենտրոնանալով այդ պետություններում ապրող բնակչությանը վիճակը թեթևացնելու վրա:

Ամփոփելով հարկ է նշել, որ ատենախոսության հեղինակ Վ. Մանուկյանը համակողմանիորեն վերլուծության է ենթարկել հետազոտության գիտական նորույթով պայմանավորված խնդիրները՝ հասնելով ցանկալի արդյունքների: Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարված են առանցքային նշանակություն ունեցող եզրահանգումներ, ընդհանրացումներ և առաջարկություններ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է դրա հիմնական դրույթների արտացոլումը: Հեղինակի կողմից հրապարակված թվով տաս գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և հիմնավորվածությամբ: Այն շարադրված է գրագետ, գիտավերլուծական բովանդակությամբ, հեղինակային ինքնուրույն հետազոտություն է:

Բարձր գնահատելով Վիոլետտա Մանուկյանի կողմից ներկայացված աշխատանքը և նկատի ունենալով թեմայի բազմաշերտությունն ու բարդությունը՝ հարկ

եմ համարում նշել մի քանի դիտողություններ և նկատառումներ, որոնց շուրջ ատենախոսը կներկայացնի իր պարզաբանումները.

1. Հաշվի առնլեով փաստը, որ հետխորհրդային տարածքը իր մեջ ներառում է, իրավաքաղաքական կարգավիճակի տեսանկյունից, նաև մասնակի ճանաչված պետություններ (օրինակ՝ Հարավային Օսիա, Աբխազիա), ատենախոսության եթե ոչ վերնագրի, ապա բովանդակության մեջ ցանկալի կլիներ դիտարկել երկու կարգավիճակների տարբերությունը՝ դրանով ընդգծելով մասնակի ճանաչված պետությունների կայացման առանձնահատկությունները:
2. Հեղինակը քննարկում է «պետության կայացում» հասկացությունը և դրա մասին մոտեցումների բազմազանությունն աշխատանքի առաջին գլխում, սակայն առաջարկում է իր սահմանումն աշխատանքի չորրորդ գլխում:
3. Հետազոտությունը կշահեր, եթե հեղինակը առանձին գլխով մանրամասն անդրադարձ կատարեր և համեմատական անցկացներ հետխորհրդային տարածքի չճանաչված կամ մասնակի ճանաչված պետությունների կայացման գործընթացների ինչպես նաև՝ դրանց զարգացման հեռանկարների միջև:
4. **Տեխնիկական դիտողություն:**

   Ատենախոսությունն իր ծավալով մոտենում է դոկտորական աշխատանքին:

   Ատենախոսությունը զերծ չէ նաև տեխնիկական ոչ էական վրիպակներից:

Այսուհանդերձ, կարևորելով թեկնածուական ատենախոսության գիտական նորույթը և եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի հույժ արդիականությունն ու հեղինակի գիտական պատրաստվածությունը, հարկ է նշել, որ արված դիտողությունները չեն նսեմացնում կատարված հետազոտության արժեքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ **Վիոլետտա Սերգեյի Մանուկյանի «Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկություններն ու հեռանկարները»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին

ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոս՝ **Հայկ Թորոսյան**

ՀՀ ԱԳՆ բազմակողմ քաղաքականության և
զարգացման համագործակցության վարչության
3-րդ քարտուղար, ք.գ.թ.

Պաշտոնական ընդդիմախոս քաղ. գիտ. թեկնածու Հայկ Թորոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ

ՀՀ ԱԳՆ գլխավոր քարտուղար **Վ. Մելիքյան**

ք. Երևան, 20.10.2020 թ.